



Rév. Dr Abel Manoukian
Curé de l'Eglise

3, Bd. James Fazy - 1201 Genève,
Tél.: (022) 741 24 33, Natel: (079) 301 24 33
Fax: (022) 741 24 15, E-mail: abel-hratch@bluemail.ch

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Ստացայ Ձեր 5 Մայիս 2011, թիւ 792 «Հայրապետական Տնօրինութիւն»-ը, ըստ որի ա/թ Մայիս 10-էն սկսեալ, ես, Աբէլ Քինյ. Մանուկեանս, քահանայագործութենէ կը «կախակայուիմ»:

Կախակայման տոյն տնօրինումը առաջնորդուած է անձիս դէմ ուղղուած հետեւեալ մեղադրանքներով.

- Ա. «Կարգազանց ընթացք»,
- Բ. «Շվեյցարիայում հաստատուած կանոնական թեմի իրողութիւնը մերժելու»,
- Գ. «Նշանակուած առաջնորդական տեղապահի և Ժնևի Ս. Յակոբ եկեղեցու հովուի հանգամանքը չճանաչելու» և,
- Դ. «Մայր Աթոռ ներկայանալու Հայրապետական հրահանգները չկատարելու համար»:

Ներող եղէք, Վեհափառ Տէր, Ձերդ Սրբութեան ըսելու, որ միանգամայն անհիմն կը նկատեմ և հետեւաբար անարդար՝ զիս «կարգազանցութեան» մէջ մեղադրելով «կախակայելի»-ը և քահանայագործութիւնս արգիլելը:

Եկեղեցական, ծիսական, կրօնական, կանոնական, կարգապահական առումով ծանրակշիռ կամ իրական ոչ մէկ հիմք գոյութիւն ունէր, որ Դուք, Վեհափառ Տէր, Հայրապետական նման տնօրինում մը կիրարկէիք նուաստիս նկատմամբ:

Ահա թէ ինչու.

Ա. Ձեր որոշումը կ'անտեսէ ցայսօր Հայ Եկեղեցիէն ներս բերած իմ բազմամեայ ծառայական վաստակը, հոգեւոր-բարոյական առաքելութեան և հաւատքի կոչումնաւոր բազմաթիւ վկայութիւնները:

Բ. Ո՛չ մէկ գրաւոր և ոչ մէկ պաշտօնական յայտարարութիւն գոյութիւն ունի այն մասին, որ ես «մերժած լինեմ Շվեյցարիայում հաստատված կանոնական թեմի իրողութիւնը»: Ընդհակառակը՝ ե՛ր բերանացի, ե՛ր Ձերդ Սրբութեան ուղղած նամակներուս մէջ մի՛շտ յայտնած եմ իմ պատրաստականութիւնը, ծառայելու Զուիցներիոյ Հայց. Առաք. Եկեղեցիին և անոր ընդմէջէն սիրելի ազգիս:

Գ. Ձերդ Սրբութեան իմ կատարած գրաւոր և բերանացի հաւաստիացումներով մի՛շտ յայտնած եմ համակ պատրաստականութիւնս՝ գիտական, հովուական կամ անձնական փորձառութիւնս տրամադրելու հոգեւոր եղբայրներէս որեւէ մէկուն:

Դ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին ներկայանալու Ձեր գոյգ հրահանգներուն պատասխանած եմ համապատասխան երկու նամակներով, փոխանցած եմ նշուած ժամանակամիջոցին մէջ անմիջապէս գալ չկարողանալու իմ ունեցած իրական և ծանրակշիռ պատճառները:

Այս առթիւ, նամակներուս մէջ միշտ շեշտած եմ, թէ նշուած ժամանակամիջոցին մէջ իսկոյն գալ չկարողանալս յաչս Մայր Աթոռի իբրեւ «դժկամութիւն» կամ «չներկայանալու ցանկութիւն» չմեկնաբանուի, ընդհակառակը՝ արեւու լոյսին պէս յստակ ու պայծառ տեսանելիութեամբ հաւաստիացուցած եմ Մայր Աթոռ Ս.



Rév. Dr Abel Manoukian
Curé de l'Eglise

3, Bd. James Fazy - 1201 Genève,
Tél.: (022) 741 24 33, Natel: (079) 301 24 33
Fax: (022) 741 24 15, E-mail: abel-hratch@bluemail.ch

ST. HAGOP EGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE DE SUISSE U. ՅԱԿՈՒՔ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵՎԵՂԵՑԻ

Էջմիածին գալու, Միածնաէջ Ս. Սեղանը համբուրելու և Չերդ Սրբութեան ներկայանալու անկարողութեանս պատճառները, բայց նաև՝ վճռականօրէն յայտնած եմ ամբողջանուէր պատրաստականութիւնս յարմարագոյն առիթով իրականացնելու առաջադրուածը: Պէտք չէ զանց առնուիմ երկու կարելոր հանգամանքներ, որ ես, որպէս Հոգեւոր Հովիւ, պարտականութիւններով կապուած եմ Զուիցերիոյ համայնքին և ընտանիքիս. հա՛յր եմ և ունիմ որոշակի ու բազմապիսի պատասխանատուութիւններ:

Գալով Հայրապետական Տնօրինումի Չեր վերջին հրահանգին՝ մէկ շաբթուան ժամկէտի մէջ ներկայանալու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վանական Խորհուրդին, անկեղծութեամբ խոստովանիմ, որ ներկայիս, առողջապէս ի վիճակի չեմ կատարելու նման հրահանգի մը իրականացումը: Այս առթիւ, արտօնեցէք Չերդ Սրբութեան ներկայացնելու զիս դարմանող բժիշկին տուած համապատասխան վկայագիրը: Սակայն եթէ նոյնիսկ առողջական վիճակս անտեսելով ջանք թափէի ներկայանալու Վանական Խորհուրդին, հարց կու տամ, թէ ի՞նչ արդիւնք պիտի տար սոյն գոհողութիւնը, եթէ ոչ ինձի համար լրացուցիչ նուաստացումներու առիթ: Պատրաստ եմ հանդիպելու Չերդ Սրբութեան հետ, Հարաւային Ամերիկայի մէջ կատարած Չեր հովուապետական այցելութեան ատարտին, գալով հոն, ուր Չերդ Վեհափառութիւնը կը փափաքի:

Այս դժուարին օրերուն, որու ընթացքին խստօրէն տուժեց ոչ միայն իմ, բայց նաև ընտանիքիս հոգեկան վիճակը, ներշնչուած եմ բոլորիս յայտնի «Խոհեմութեան Աղօթք»-ով, որ թարգմանաբար կը կիսեմ նաև Չերդ Սրբութեան հետ:

Աստուած իմ, ինձի խոհեմութիւն շնորհի
Ընդունելու բաներ՝ որոնք չեմ կրնար փոխել,
Քաջութիւն՝ փոխելու բաներ՝ որոնք կրնամ,
Եւ իմաստութիւն՝ ըմբռնելու անոնց տարբերութիւնը:

Տէր, ինձի համբերութիւն տո՛ւր՝
Ժամանակ պահանջող փոփոխութիւններուն համար,
Երախտագիտութիւն՝ բոլոր ունեցածներուս համար,
Հանդուրժողութիւն՝ տարբեր տեսակի պայքարներու համար,
Եւ ուժ՝ ոտքի կանգնելու և նորէ՛ն փորձելու համար:

Խորապէս կը զիտակցիմ, որ Չեր որոշումը գուցէ վերջնական է, ուստի զայն պիտի ընդունիմ, բայց և քաջութիւնը պիտի ունենամ տնօրինելու իմ կեանքի յետագայ բայլերը՝ պահպանելու իմ մարդկային արժանապատուութիւնը և շարունակելու բարձր պահել Զուիցերիոյ համայնքին մէջ իմ ունեցած բարի անունը, ինչպէս նաև յարատելելու իմ աստուածաշնորհ գործունէութեան մէջ: Հոգեպէս կ'ապաւինիմ միայն Աստուծոյ ամենակարողութեան և ամենուրեք ներկայութեան վրայ. աստուածատուր շնորհներ, որոցմէ ոչ ոք կարող է զիս զրկել:

Մատչելով Չերդ Օծեալ Աջոյն ի համբոյր և Մօրն լուսոյ Սրբոյ Էջմիածնի՝

Ժրնել, 11 Մայիս 2011

Աբել Քհնյ. Մանուկեան